ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5
«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀՀԲՄԾՁԲ-7/6» ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՐԱՏԱՊ ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ (ՀԲՄ) ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

Ք. Երևան

10-ը հոկտեմբերի 2018թ.
Ժամը 10^{00}

Մասնակցում էին՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյան (ԳԱՊ),
ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյան,
ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյան:

Բացակայում էր

ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պահեստների,տեխնիկական միջոցների և բաղնիք-լվացքատնային սպասարկման բաժանմունքի ավագ ինժեներ, կապիտան Վ.Բարսեղյան:

Գնումները համակարգող (հանձնաժողովի քարտուղար)՝

ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության նյութատեխնիկական միջոցների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի գլխավոր մասնագետ, ՔՀՇ 3-րդ դասի խորհրդական Տ. Աբրահամյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Տ.Աբրահամյան)

1. Մասնակիցների՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց շրջանակային համաձայնագրերով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակցի՝ ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող(նախատեսված) որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկայության և դրանց ՀԲՄ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Տ.Աբրահամյան)

1.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերով պահանջվող որակավորման չափանիշներին «Էլաամոդա» ՍՊԸ համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը առկա են և դրանցում առկա է անհամապատասխանություն, մասնավորապես՝

-Մասնակցի կողմից ներկայացվել է նմանատիպ 1 պայմանագիր, որը թեև պատշաճ կատարված է, բայց դրա շրջանակներում մատակարարվել են ապրանքներ /կոստյումներ/, իսկ «դերձակի ծառայությունների» ձեռքբերմնան համար, սույն ընթացակարգի հրավերով, պահանջվում է ներկայացնել «դերձակի ծառայությունների» մատուցման պատշաճ կատարված պայմանագիր /պայմանագրեր/: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ նիստը կասեցվեց և գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով մասնակցին ծանուցվեց սահմանված ժամկետում շտկելու անհամապատասխանությունը, ինչին ի պատասխան «Էլաամոդա» ՍՊԸ-ն ներկայացրել է գրություն /կցվում է սույն արձանագրությանը/ և մի քանի այլ պայմանագրեր /ապրանքների մատակարարման/ որոնք գնահատող հանձնաժողովի կողմից չքննարկվեցին:

Հիմք ընդունելով մասնակցի կողմից ներկայացված վերոնշյալ գրությունը՝ գնահատող հանձնաժողովի անդամներ ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի ԹԱ վարչության պետի տեղակալ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Հ. Մելիքյանը (ԳԱՊ) և ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱ վարչության իրային, ՎՔՆ, կուլտուր-կենցաղային և սպորտային միջոցներով ապահովման բաժնի պետ, ՔՀՇ 1-ին դասի խորհրդական Գ. Ուստյանը որոշեցին մասնակցի ներկայացրած պայմանագիրը /N ՇՀԱՊՁԲ-7/48-3/ համարել համապատասխանող սույն ընթացակարգի հրավերի պայմաններին, իսկ գնահատող հանձնաժողովի անդամ ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության իրային ծառայության պետ, գնդապետ Վ. Պապյանի կարծիքով «Էլաամոդա» ՍՊԸ ներկայացրած պայմանագիրը չի համապատասխանում հրավերի պայմանագրին, ուստի վերջինս դեմ քվեարկեց որոշմանը և ներկայացրեց հատուկ կարծիք /կցվում է սույն արձանագրությանը/:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 2, դեմ՝ 1

Ընթացակարգի քարտուղար Տ. Աբրահամյանը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի /այսուհետ՝ Կարգ/ 27-րդ պահանջները գրավոր զեկուցագրով դիմել Պատվիրատուի ղեկավարին՝ Կարգի 27-րդ կետի պահանջներին համապատասխան կասեցնելու նիստը և հանձնարարելու պատվիրատուի իրավաբանական ծառայությանը՝ տալ իրավական եզրակացություն գնահատող հանձնաժողովի՝ սույն արձանագրության 1.1 կետով ընդունած որոշմանը:

05.11.2018թ., ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ, ՔՀԾ 2-րդ դասի պետական խորհրդական Ս.Սիմոնյանի կողմից տրված իրավական եզրակացության համաձայն, ներկայացված մատակարարման պայմանագիրը (ՇՀԱՊՁԲ-7/48-3) գնահատող հանձնաժողովի կողմից որպես «փորձառության չափանիշ» հիմք ընդունելն իրավաչափ է:

Քանի որ 09.10.2018թ ստացվել է ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետով նախատեսված համապատասխան եզրակացությունը՝ հանձնաժողովը որոշեց մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարել իրականությանը համապատասխանող,

1.2 06.11.2018թ Հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց «Էլաամոդա» ՍՊԸ որակավորման հատկանիշները գնահատել համապատասխան « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/1» ծածկագրով ՀԲՄ ընթացակարգի հրավերի պահանջներին և վերջինիս հայտարարել ընտրված/հաղթող/ մասնակից:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել « ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հրապարակել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

6. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Տ.Աբրահամյան)

2.1 Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը հրավիրել գնման պայմանագիր կնքելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող օրացուցային օրը ժամը 11⁰⁰-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ) **Հ. Մելիքյան**

Գնահատող **Գ. Ուխտյան**

Գնահատող **Վ. Պապյան**

Գնումները համակարգող՝ **Տ. Աբրահամյան**

15.10.2018թ.

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին

Հարգելի հանձնաժողով, ի պատասխան Ձեր ծանուցագրի, հայտնում ենք Ձեզ, որ «ՀՀ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգին մեր կողմից ներկայացված պայմանագրերով մատակարարվել է «Էլաամոդա» ՍՊԸ-ի սեփական արտադրանքը:

Իրացման նպատակով դուրս գրված հարկային հաշիվները E-Invoicing համակարգում և ընդհանրապես բաժանվում են երկու խմբի՝ ծառայությունների մատուցման հարկային հաշիվ, որն իր մեջ ներառում է ծառայությունների մատուցման և աշխատանքների կատարման հարկային հաշիվներ և ապրանքների մատակարարման հարկային հաշիվներ, որը ներառում է ապրանքների և արտադրանքների մատակարարումները: Հետևաբար կարի արտադրանքը իր մեջ ներառում է դերձակի գործունեություն, որից էլ հետևում է, որ վերը նշված պայմանագրերում ներառված է դերձակի ծառայությունը:

Digitally signed by HOVSEPYAN ELBEK 1201611139
Date: 2018.10.12 16:33:36 GMT+04:00

Հարգանքով՝

«Էլաամոդա» ՍՊԸ տնօրեն՝ *Է. Հովսեփյան*

ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

պարոն Մ.ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ

ԶԵԿՈՒՅԱԳԻՐ

Հարգելի պարոն Ղամբարյան

Հայտնում եմ Ձեզ, որ ՀՀ ՊՆ կարիքների համար դերձակի ծառայությունների գնման նպատակով հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչվեց «Էլաամոդա» ՍՊԸ-ն: Այնուհետև մասնակցին սահմանված կարգով առաջարկվեց ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը, որոնք վերջինիս կողմից օրենսդրությամբ նախատեսված ժամկետներում ներկայացվեցին:

Գնահատող հանձնաժողովի կողմից «Էլաամոդա» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերի ուսումնասիրությամբ պարզվեց, որ որպես «մասնագիտական փորձառություն» չափանիշը հավաստող փաստաթուղթ՝ մասնակիցը ներկայացրել է կոստյումների մատակարարման պայմանագիր, այնինչ ընթացակարգի հրավերով որպես նմանատիպ էին սահմանվել «համազգեստների, կոստյումների դերձակի ծառայության մատուցման» պայմանագրերը: Մասնակցի կողմից ներկայացված պայմանագիրը հանձնաժողովը գնահատեց հրավերի պահանջներին ոչ համապատասխան և 10.10.2018թ. կայացած նիստում միաձայն որոշեց՝ «Էլաամոդա» ՍՊԸ-ին առաջարկել շտկելու առկա անհամապատասխանությունը:

11.10.2018թ «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից, առկա անհամապատասխանությունը շտկելու ծանուցմանն ի պատասխան ներկայացվեց պարզաբանում՝ գրության տեսքով, որին կցված էին ապրանքների մատակարարման այլ պայմանագրեր: Այսինքն մասնակցի կողմից ծառայությունների մատուցման պայմանագրեր չներկայացվեցին:

18.10.2018թ. կայացած նիստում գնահատող հանձնաժողովը, քննարկելով «Էլաամոդա» ՍՊԸ-ի կողմից որպես շտկում ներկայացված գրությունը և պայմանագրերը, երկու՝ կողմ և մեկ՝ դեմ ձայների համամասնությամբ որոշեց մասնակցի կողմից որպես «մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հավաստելու համար ներկայացված պայմանագիրը գնահատել հրավերի պահանջներին համապատասխան՝ այն հիմնավորմամբ, որ նշված պայմանագրով մատակարարվել են այնպիսի ապրանքներ, որպիսիք պետք է ձեռքբերվեն քննարկվող մրցույթի շրջանակներում մատուցվելիք ծառայությունների արդյունքում: Ընդ որում, որոշմանը կողմ են քվեարկել

գնահատող հանձնաժողովի անդամ Հ. Մելիքյանը, գնահատող հանձնաժողովի անդամ Գ. Ռիստյանը: Գնահատող հանձնաժողովի անդամ Վ. Պապյանը դեմ է քննարկվող գերը նշված որոշմանը (գնահատող անդամը հատուկ կարծիքը կից ներկայացվում է), իսկ գնահատող հանձնաժողովի անդամ Վ.Բարսեղյանը բացակա է եղել:

Հանդիսանալով Մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղար և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 27-րդ կետի պահանջները՝ գտնում եմ, որ հանձնաժողովի կողմից «Էլաամոդա» ՍՊԸ-ի որակավորման փաստաթղթերի գնահատումն իրականացնելիս ոչ ճիշտ է մեկնաբանվել ընթացակարգի հրավերի 1-ին մասի 2-րդ հոդվածի 2.5 կետի 1-ին ենթակետի «ա» պարբերությամբ սահմանված պահանջը՝ պայմանագրերի նմանատիպության վերաբերյալ:

Խնդրում եմ Ձեր որոշումը:

Առդիր՝ 29 էջ:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի
քարտուղար Տ.Աբրահամյան

18 10 2018 1201 2/24

ՀԱՅԱՍՏԱՆ ... ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԵՐ...
ՋՈՐԱՄԻՍ
Вх.№ 23124

ՀՀ պաշտպանության նախարարի
տեղակալ Մ. ՂԱՄԲԱՐՅԱՆԻՆ

01.11.2018 թ. № 1301

Հարգելի պարոն Ղամբարյան

2018թ. հոկտեմբերի 23-ի Ձեր հանձնարարականի համաձայն՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 27-րդ կետի 1-ին ենթակետի «բ» ենթակետի համաձայն իրավական եզրակացություն տալու նպատակով, ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության կողմից ուսումնասիրվել է հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ՀԲՄԾՁԲ-7/6» ծածկագրով հրատապ բաց մրցույթի հայտերի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովի կողմից 18.10.2018թ. նիստում ընթացակարգի 1-4-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղը զբաղեցնող մասնակից ճանաչված «Էլաամոդա» ՍՊԸ կողմից որպես «փորձառության չափանիշ» ներկայացված մատակարարման պայմանագիրը (20.05.2018թ., ՇՀԱՊՁԲ-7/48-3), գնահատող հանձնաժողովի քարտուղարի զեկուցագիրը և հանձնաժողովի անդամի հատուկ կարծիքը, ինչպես նաև մեր կողմից լրացուցիչ պահանջված գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագիրը և գնման ժամանակացույցը: Համաձայն ներկայացված փաստաթղթերի՝ քննարկվող խնդիրը վերաբերում է այն հանգամանքին, թե արդյոք գնման առարկա հանդիսացող՝ համազգեստի, կոստյումի «դերձակի ծառայությունների մատուցում» փորձառության չափանիշը կարող է կամ չի կարող նույնականացվել համազգեստի, կոստյումի «մատակարարում» փորձառության չափանիշի հետ:

Տվյալ պարագայում խնդրի շրջանակներում էական է «ծառայությունների մատուցում» և «մատակարարում» հասկացությունների օրենսդրական սահմանման հստակեցումը, ինչպես նաև հայտարարված մրցույթով և ներկայացված մատակարարման պայմանագրով գնման ենթակա ապրանքների տեխնիկական բնութագրերի վերլուծությունը: Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 521-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների՝ մատակարարման պայմանագրով ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող **մատակարարվաճառողը պարտավորվում է իր արտադրած կամ գնած ապրանքները** պայմանավորված ժամկետում (ժամկետներում) հանձնել գնորդին: Օրենսգրքի 777-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի պահանջների համաձայն՝ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով՝ կատարողը պարտավորվում է պատվիրատուի առաջադրանքով ծառայություններ մատուցել (կատարել որոշակի գործողություններ կամ իրականացնել որոշակի գործունեություն), իսկ

05 11 2018 թ. 3

ՄՈՒՏՔ 10938
02 11 18 թ.
3
(2)

պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար: Սույն գլխի կանոնները կիրառվում են կապի, բժշկական, անասնաբուժական, աուդիտորական, խորհրդատվական, տեղեկատվական, ուսուցման, զբոսաշրջիկության և այլ ծառայությունների պայմանագրերի նկատմամբ: Օրենսգրքի 778-րդ հոդվածի համաձայն՝ կատարողը պարտավոր է ծառայությունները մատուցել անձամբ, եթե այլ բան նախատեսված չէ ծառայությունների վճարովի մատուցման պայմանագրով:

Քննարկվող հայտարարված մրցույթի շրջանակներում գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրի համաձայն՝ Պատվիրատուի կողմից տրամադրվում է երեսացուի գործվածք, **մատակարարումից** առնվազն մեկ ամիս առաջ: Միաժամանակ, սահմանվում են փաթեթավորման և մակնշման պայմաններ, ինչպես նաև Կատարողի կողմից ապահովման ենթակա պատրաստի արտադրանքի համար օգտագործվող այլ միջոցներ (սինտիպոնով կտոր, կոճակ): Գնման ժամանակացույցի ծանոթությունում սահմանվում է Կատարողի (նշված է՝ մատակարար կազմակերպության) կողմից ծառայության մատուցման արդյունքում **արտադրված ապրանքների մատակարարման պահանջը**: Ներկայացված մատակարարման պայմանագրի՝ գնման ենթակա ապրանքի տեխնիկական բնութագրի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ գնումը մատակարարում է համարվել (օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման շրջանակներում՝ Կատարողի կողմից արտադրած կամ գնված ապրանք) միայն մեկ պատճառով՝ Պատվիրատուի կողմից Կատարողին որևէ ապրանք չի տրվել (տվյալ պարագայում՝ երեսացուի գործվածք): Ուսումնասիրության շրջանակներում էական է նաև «դերձակի ծառայությունների մատուցում» արտահայտության իմաստի որոշումը: Փաստացի այն թե լեզվական, և թե իրավական մեկնաբանման տեսանկյունից իրենից ներկայացնում է դերձակի (կար անող անձ, կարի արհեստանոց) կողմից կտորեղենի (գործվածքի) **կարման միջոցով** հագուստի (հանդերձանքի) **արտադրում (ստեղծում)**, ինչպես նաև պատրաստի հագուստի վերանորոգում:

Համադրելով վերը նշված ուսումնասիրությունների և ՀՀ քաղաքացիական օրենսգրքի պահանջները, գտնում եմ՝

1. պայմանագրի կնքման շրջանակներում բացառապես Պատվիրատուի կողմից Կատարողին որևէ ապրանք տրամադրելու հանգամանքը պայմանագրի բնույթը որոշելու հիմք չէ (օրինակ՝ օրենսգրքի 777-րդ հոդվածի 3-րդ մասի շրջանակներում՝ արդյոք կապի ծառայության գնման պայմանագիրը ծառայության մատուցում է դիտարկվում միայն այն դեպքում, եթե Պատվիրատուն Կատարողին հանձնում է որևէ ապրանք), այն ընդամենը հանդիսանում է պայմանագրի պայման (օրենսգրքի 367-րդ հոդվածի շրջանակներում՝ հանդիպական պարտավորություն), որն ազդում է պայմանագրի գնի վրա,

2. «դերձակի ծառայությունների մատուցումը» փաստացի հանդիսանում է ապրանքի արտադրում և մատակարարում, որն օրենսգրքի 521-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորման շրջանակներում է՝ որպես մատակարարման պայմանագրի առարկա,

3. գնահատող հանձնաժողովի կողմից ներկայացված մատակարարման պայմանագիրը (20.05.2018թ., ՇՀԱՊՁԲ-7/48-3) որպես «փորձառության չափանիշ» հիմք ընդունելն իրավաչափ է:

Հարգանքով՝

ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության պետ,

քիծ 2-րդ դասի պետական խորհրդական Ս. ՍԻՄՈՆՅԱՆ

Հայտարարություն

Ես, Խաչատուր Գրիգորի Գասպարյանս, ծանուցում եմ ՀՀԴՀ ԶՏԿԳ-ՀԱՍԴԶԲ-7/6 գործով հարուցվելիք քրեական գործով ներգրավված «Գլխավոր» ՍԴՀ-ի կողմից հանձնարարված գրավոր հանձնարարականները ստացել եմ 65 թվականի դեկտեմբերի 5-ին, որ հետաքննության ընթացքում անձնագրային տվյալներս ճշգրտվեցին, իսկ հետաքննության ընթացքում ստացված տվյալները, որոնք կապված են գործի հանգամանքների հետ, ճշգրտվեցին:
Պարզ է, որ 65 թվականին ներգրավված «Գլխավոր» ՍԴՀ-ի հանձնարարականները չեն ներառվել գրավոր տվյալներում:

Հայ. Սոց. Դեմ. կուս
գլխավոր քարտուղար Խ. Գասպարյան
18.10.18թ